ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
*Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք*

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
*Ն-430-20.12.2019-ՏՏԳՓ-011/0*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
*Օ Ր Ե Ն Ք Ը*
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.*

«Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 07-ի ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 23.1-ին կետով.

«23.1) իր որոշմամբ հավանություն է տալիս նվիրատվության ընդունմանն այն դեպքում, երբ համայնքը նվիրառու է, իսկ նվիրատվության առարկայի արժեքը (գումարը) գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, ինչից հետո միայն համայնքի ղեկավարն իրավասու է կնքելու նվիրատվության պայմանագիրը~~նվիրատվության պայմանագիրը կարող է համարվել կնքված, իսկ նվերը՝ ընդունված~~.»:

*Հոդված 2.*

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: